



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ  
ՀՐԱՄԱՆ

№ 1141-ՉԽ/Բ

26 09 2013թ.

«ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ՝ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 10-Ի N 1081-Ա/Ք ԵՎ 1082-Ա/Ք ՀՐԱՄԱՆՆԵՐԸ ՉԵՂՅԱԼ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ «ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ 7-9-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ԴԱՍԱԳՐՔԵՐՆ ՈՒ ՈՒՍՈՒՑՉԻ ՁԵՌՆԱՐԿՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 75-րդ հոդվածի 1-ին մասով, հիմք ընդունելով «Կրթության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 6-րդ մասի, 30-րդ հոդվածի 20-րդ կետի պահանջները և կրթության ազգային ինստիտուտի մասնագիտական կարծիքները՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Չեղյալ ճանաչել ՀՀ կրթության և գիտության նախարարի՝ 2013 թվականի սեպտեմբերի 10-ի՝ «Հայոց եկեղեցու պատմություն» առարկայի 7-9-րդ դասարանների դասագրքերը երաշխավորելու մասին» N 1081-Ա/Ք և «Հայոց եկեղեցու պատմություն» առարկայի 7-9-րդ դասարանների դասագրքերին կից ուսուցչի ձեռնարկները երաշխավորելու մասին» 1082-Ա/Ք հրամանները:
2. Հանրակրթական դպրոցում գործածության երաշխավորել «Հայոց եկեղեցու պատմություն» առարկայի 7-9-րդ դասարանների դասագրքերը և դասագրքերին կից

ուսուցչի ձեռնարկները (<<Տիգրան Մեծ>> հրատարակչություն, հեղինակներ՝ Վ.Ղանդիլյան, Ա.Գյուլբուդադյան, Վ.Պարսամյան. Ա.Նազարյան. Ա.Սարգսյան, Հ.Մարգարյան):

3. 2013-2014 ուսումնական տարվանից <<Հայոց եկեղեցու պատմություն>> առարկայի 7-9-րդ դասարանների դասագրքերը ներառել դասագրքերի և տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների շրջանառու հիմնադրամի դասագրքերի ցանկում և սահմանել 300 ՀՀ դրամ ներդրումային գումար:
4. 2018-2019 ուսումնական տարվանից դասագրքերի հրատարակումը նախատեսել դպրոցների հաշվեհամարներում հավաքագրված գումարների հաշվին՝ դասագրքերի և տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների շրջանառու հիմնադրամի և հրատարակչության միջև կնքվող պայմանագրի հիման վրա:
5. Հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ կրթության և գիտության նախարարին:



**ԱՐՄԵՆ ԱՇՈՏՅԱՆ**